

առաջնորդեցէ և որբեացէ զամենայն տիեզերս :

Քրիստոսի էր անկ նախ առաջին զատուցանել յողովուրդ նոր, որում և տասցն . « Պատուիրան նոր տամ ձեզոց , և դարձեալ , « Եթէ սիրէք զիս , ըզպատուիրանս իմ պահէս ձեր » . և եւս յայտնագոյն . « Ասացաւ առաջնայն թէ մի սպանաներ , բայց ես ասեմ ձեզոց , և այլն որ զինի նովին ոճով և նովին իշխանութեամբ :

Սոյն սա է ապա նոր մարգարէն նմանեալ Մովսէսի , առողն նորոյ օրինաց , և զնմանէ ասաց մեզ Մովսէս ՚ի գուշակել իւրում զշաղուստ նորա , եթէ « Նմա լուծիք » . և ահա ՚ի լըրումն խոտմանս այսորիկ ինքն իսկ Աստուած որոտաց ՚ի բարձանց զայս բարբառ աստուածային . « Գա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ , զըմա լուարուք » :


Նոյն մարգարէն էր և նոյն Քրիստոս զոր տպաւորեաց Մովսէս օձիւն պղնձեաւ , զոր կանգնեաց յանապատին : Հարկ էր մարդկայինս աղգի ՚ի սոյն հայելով օձ . այսինքն է ՚ի նա հաւատով որպէս ինքն իսկ մեկնաբանէ՝ բժշկել ՚ի խայթուածոյ հնոյ օձին , որով թունաւորեալք մահանալք ամենեքեան : Եւ ընդէր է ինձ զօձն միայն պղնձի ամեղ ՚ի յիշատակ : Ամենայն օրէնք Մովսիսի , ամենայն զսհք նորա , քահանայն մեծ կարգեալ ՚ի նըմանէ այնչափ խորհրդական արարողութեամբք , մուտ նորա ՚ի սրբութիւնն . համառօտ ասել՝ ամենայն իսկ պաշտամունք հրէական օրինաց հաւօրէն՝ յորում ամենայն ինչ արեամբ սրբէր , և գառն անգամ զենեալ ՚ի մեծի տօնին որ զատիկն կոչէր՝ ՚ի յիշատակ աղաստութեան աղբին . այս ամենայն ոչ այլ ինչ նշանակէր՝ բայց միայն զՔրիստոս , որ առեամբն իւրով փրկա-

գործեաց զժողովուրդն Աստուծոյ . Վէպք աղգաց , Ա . հատ . երես 295 . ըստ այսմ է և բան որբազան Ասաբելցն Պօղոսի յերբայեցիան ՚ի գլ . Թ . հմ . 1-15 :

Հ . Յետ որոյ այլ ո՞րք եղև երեւելին ՚ի մարգարէից , որ զբազում գուշակութիւնս արար զՔրիստոսէ :

Պ . Գաւ ի թ մարգարէն՝ որ նախաձայնեալ է ՚ի սաղմոսարանի իւրում զբազում նշանաւոր յայտնութիւնս զՔրիստոսէ , այսինքն նկարագրէ զնորին մարդեղութիւնն , զարչարանս , զհամբարձումն , զպէսպէս պաշտամունս , զմարգարէութիւն , ըզքահանայութիւն , զթագաւորութիւն և այլն , զոր օրինակ :

(Երբանակիւ)



ԱՄԵՆԱՊՍԻԻ ՊՍՏԻԱՐԲ ԱՍՈՐՈՅ
ՅԱՆԳՂԱՅ

ՃԸՆԷ անուն լրագիրն հետեւեալն կը հրատարակէ :

Անգղիոյ եպիսկոպոսապետ Քանթըրպերի հրաւիրեց Ըսորոց Ամեն . Պատրիարքն , որ առաջին կարգի Սեճիտի նշան ունի , և Արուստղէմի եպիսկոպոսն ՚ի ճաշ , փառաւոր ընդունելութեամբ ընդունելով և եկեղեցական զգեստով ու զղակի եկեղեցին տանելով : Արբ համառօտ աղօթքն աւարտեցաւ , Քանթըրպերի հրաւիրելոց առջև ճառ մի կարգաց , յը

բում կը յորդորէր Ասորոց Պատրիարքին որ համաձայնի իրեն հետ ձէսերով և արարողութեամբ, որոց պատճառաւ իսկ ինքն Անգղիոց եկած է: Կը յայտարարէր Քանթրբուրի, որ ինքն կը յուսայ, որ երբ Ամեն. Պատրիարքն Արեւելք դառնայ, անպատճառ իրեն հետ պիտի կրէ այն ազդեցութիւնն կամ ապուրուածիւնն, զոր տեսաւ Անգղիոց եկեղեցւոյն եւ բնակչոց մէջ, այն է զուտ բրիտանեակութիւն, առաքելական հաւատ և դիտութիւն, որ պատճառ է բնակչոց լուսաւորութեան: Քանթրբուրի յաւել նաեւ՝ թէ ինքն վը ճանաչէ Եակոբեան ուղղափառ Ասորիներն և գիտէ այն անհամաձայնութիւնն կամ տարբերութիւնն, որով Ասորոց եկեղեցին կը բաժնուի Անգղիականէն և ուրիշ բրիտանեակական եկեղեցիներէն, ծանօթ է իրեն նմանապէս, որ ինչ ինչ ուսմանըներ որ բողոքական Ասորոց կը պատկանի և Սերտինին մէջ հերքուած է, դուք կըսէք թէ սուտ է: Ուստի կը յուսայ անկասկած որ կը միանայ Քրիստոսի եկեղեցին և դուք Ասորիքը կը գտք Աւերապայ միութեան գործն տնօրինելու, որ է հաճոյ ամենայն բրիտանեկոյ:

Սոյն բանախօսութեան թարգմանն էր Տէր Սարգսրն, որ Պատրիարքի հետ էր:



ԵՂԵՌԵԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ինթէնէմի Տեսուչն կը գրէ:

«Երեկեան որ Քառասնից այրին մօտ, Թղենեաց տակ, Եռնայ դաւանութեանն կին մի պարտէզն գը»

նացած լինելով իւր էրկան աջացաւի համար յատուկ բոյս մի որոնելու համար, կըսպանուի:

Սպանողն կ'աշխատի խեղճ կնոջ ճակտի սակիներն յափշտակելու, և կինն կը դիմագրէ ամենայն զօրութեամբ, Եղեռնագործն անտէրով որ հնար չը կայ, իսկոյն դաշտնն կը հանէ, կնոջ վիզն կիսով չափ կը կտրէ, աչքերն կը հանէ, փորն կը ծակէ, կուրծքն կը ձեղքէ, ստինքներն կը կտրէ, թուերն կը ձեղքէ, մինչև որ կը յաջողն անչնչացնել և սակիներն յափշտակել. Սպանման ժամանակն ճիշդ յայտնի չէ, միայն թէ Ժամն Ա ին քանի մի աղջկունք շրջագայութեան ժամանակ խեղճ կնոջ գիտին կը գտնեն ծառի տակ, լուր կը տան և իսկոյն իւր տունը կը տարուի »:

Այս եղեռնագործութեան մասին Ինթէնէմի բնակիչք հանրագրութեամբ խնդրագիր մատուցած են Երուսաղէմի Պատրիարքարանայ՝ եղեռնագործն գտնելու համար իրենց ազդու միջամտութիւնն գործ դնել:

Տեղւոյս կառավարութիւնն զօրականներ հանած է զանազան կողմեր բայց երկու շաբաթ անցած է և տակաւին եղեռնագործն գտնուած չէ:

